

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունված է
20 հունիսի 2013 թ.

Հոդված 1. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-66-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի «35000 դրամ» բառերը փոխարինել «45000 դրամ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում՝

- 1) երկրորդ պարբերության «210 դրամ» բառերը փոխարինել «270 դրամ» բառերով.
- 2) երրորդ պարբերության «234 դրամ» բառերը փոխարինել «300 դրամ» բառերով.
- 3) չորրորդ պարբերության «350 դրամ» բառերը փոխարինել «450 դրամ» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

28 հունիսի 2013 թ.
Երևան
ՀՕ-61-Ն